

Խմբ. — Հանգիստ հոգւոյ Ամեն. և Գեր-
երջ. Հոգեւոր Տէր Աւետիս Պետրոս ԺԳ.
Արքիարեանի, Կաթողիկոս — Պատրիարք
Տանն Կիլիկիոյ. 225

Բանասիրական

Կ. Քիւրապիլի. — Լիվուրնոյի Առաջին
տպագրիչը Հայ քահանայ մըն էր. (Թրգ.
և ծանոթագր. Հ. Ե. Փ.) 229

Յ. Քիւրապիլի. — Փայտափորագրական
մանրանկարչութիւնը և մանրանկարիչներ
Հայ Տպագրութեան մէջ. 239

Գրական

Արսէն Երկար. — Ս. Նշանի վանքը
(քերթ.) 249

Հ. Վահան Յովհաննէսեան. — Խոնար-
հութիւն (քերթ.) 249

Ֆերապ. — Այս ճամբան — Չգայի 250

Հ. Միքայէլ Յովհաննէսեան. — Միւ-
թարայ կիսանդրիին 251

Գոշրգէն Մանարի. — Երգիծական (Ե-
րեւանի պօէտ ներկարարը) 252

Փոյ Պոշրմէ. — Կեանքի վրէժը (Թրգմ.
Կ. Կոթիկեան) 252

Օրումն գրքեր-Գրախօսական

Հ. Կարապետ Ամատունի. — «Le Ma-
riage en Droit Canonique Oriental» (Jean
Dauvillier) 269

Հ. Կ. Ք. — «Հայ Տոմարներ» 273

Հոկիւն. — «Քրիստոնէական Գոտարարակո-
ւթիւնը մեր տուններէն ներս» (Արատազ
Արքեպ. Ս.Ի) 274

Հ. Միքայէլ Յովհաննէսեան. — «Յով-
հաննէս Թումանեան» (Վ. Ահարոնեանի) 275

Հ. Վ. Հ. — «Խորմեան գիւղատնտեսա-
կան մատենաշար» 276

Գիտական

Հ. Գեորգ Ոսկեան. — Կ. Մարքոսի 258

Գեղարուեստական

Վ. Շահպազ. — Հանճարն ու իր բիծերը. 277

Կենսագրական

Խմբ. — Յիսնամեայ Յոբէլեան Քահա-
նայութեան Հ. Թադէոս Վ. Ի Թուման-
թուղթ Ամեն. Աւետիս Պետրոս ԺԳ. Կա-
թողիկոսի առ Հ. Թ. Վ. Թուման- (տոթիւ
Յոբէլեանին) 287

Réd. — † Sa Béatitude Avédis Pierre
XIV Arpiarian, Patriarche de Cilicie . 225

Philologie

G. Chiappini. — Le premier éditeur
de Livourne a été un prêtre Arménien
(en 1643), (trad. par P. E. P.). 229

H. Kurdian. — L'Art xylographique
et les miniaturistes dans les éditions ar-
méniennes 239

Littérature

Arsène Yergath. — Le Couvent de
St. Nichan (poésie). 249

P. V. Hovhannessian. — L'humilité. 249

Férab. — Le chemin - Désir d'oubli. 250

P. M. Hovhannessian. — A Mekhithar. 251

Kourken Mahari. — Humoristique
(Le peintre poète d'Erivan) 252

P. Bourget. — «La Vengeance de la
vie» (trad. en arm. par K. Gothol) 252

Recensions

P. Garabed Amadouni. — «Le Ma-
riage en Droit Canonique Oriental» (par
Jean Dauvillier) 269

P. C. K. — «Noms des familles ar-
méniennes» 273

Hoken. — «L'éducation familiale chez
nous» (par Mgr. Ardavast) 274

P. M. Hovhannessian. — «Jean Tou-
manian» (par V. Aharonian) 275

P. V. H. — «Manuels d'Agronomie»
(Khrimian) 276

Science

P. G. Oskian. — G. Marconi 258

Beaux-Arts

Vahan Chahbaz. — Le Génie et
ses taches 277

Biographie

Réd. — Jubilé Sacerdotal du R. P.
Thaddée Tomadjian 280

Lettre de S. B. Avédis Arpiarian Pat-
riarche de Cilicie au R. P. Th. Toma-
djian 287

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ — ԳԵՏԱԿԱՆ — ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԹԻՒ 10-11

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՀԱՏ. Ղ. Ե. Ռ. 622-Ռ. 623

ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐՁԱՆԻԿ ՀՈԳԵՌՈՐ ՏԷՐ

ՏԷՐ ԱՒԵՏԻՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԱՐՓԻԱՐԵԱՆԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍ — ՊԱՏՐԻԱՐԿ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՄԱՀԱԳՈՒՇԱԿ տերեւթափն էր աշնան... երբ հեռաւոր կղզեակս ալ
հասաւ գոյթը մահուան սիրելի և սիրեցեալ Հայրապետին, որ Հոկտեմբեր
26ին Պէյրուսի մէջ կնքած իր մահկանացուն՝ թռած էր երկինք արդար-
ներու հայրենիքը, ու թառնեւ երկու տարիներու պանդխտութենէ վերջ:
Յեղակարծ բոլր լսելու պահուն լքումի խոր զգացում մը, և անդարձ
բաժանումի ցաւ մը մեր սրտերը սեղմեց. ու սիրոյ և կարօտի վառ տենչ
մը մեր դիմաց բերաւ անոր պատկերը. վերջին անգամ մ'ալ կարծես մեր
աչքին առջեւ ծառացաւ նա իր հասակովը պարթեւ, իր բարի և անոյշ
հայեացքով, իր ժպիտովը հայրական, իր ամբողջ գորովովն ու բարութեամբ՝
որ այնքան յստակօրէն կը ճառագայթէր իր անձնաւորութենէն և գիտէր
հմայել ու սիրցնել ամէն սիրտ որ բախտը կ'ունենար զինքը ճանչնալու:

Արքիարեան Կաթողիկոս ոչ եւս է:

Ի զուր պիտի վնասեն զինքը շատեր ու շատեր որ վայելած էին իր
բարութիւնն և բարերարութիւնները:

Իր հոգեկան անայլայլ ու անդորր խորութեան մէջ ան շատ վիշտ ունէր
թաղած. տառապանքները աքտորի, հուրի և սուրի. ցաւն ու արցունքը և
մահը իր հօտին: Որքան ալ արի ու բարի, սակայն հոգեկէն մարմինը շատ
կրած ու պարտասած էր, ու հիւանդութեանց հարուածին տակ մայր հոգի
գիրկը կ'իջնէր հանգչելու խաղաղ երթմամբ շրթներուն վրայ դեռ թրթռուն

ԲԱԶՄԱՎԷՊ ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ 1937

երկնքի և իր սիրելիներու անունը, և մարած բերեցուն մէջ դեռ շողշողուն՝
յարութեան յոյսը գեղեցիկ:

Այդպէս կը մեռնին արդարեւրը... և որքան քաղցր է այդպիսի մահը...

Երկար ապրուած կեանքը, ամբողջապէս նուիրուած Աստուծոյ ծառայու-
թեան և իր եղբարց և հօտին հոգեւոր ու նիւթական խնամքին, կը դադրի
հոս վշտալից թէեւ համբերատար ու զոհարեր աշխատանքով՝ իր նոր ու
փառաւորագոյն և յաւիտենական շրջանն սկսելու համար երկնքի մէջ, ուր
պիտի պսակուին իր բոլոր առաքինութիւնները այնքան հոծ և առատ և այն-
քան ալ համեստօրէն ծածկուած իր անհամեմատ պարգուծեան քօղով:

Եւ սակայն երկնքի հետ հոս երկրին վրան ալ նոր կեանքն է որ կը
սկսի իրեն համար, կեանք հոգիացած ու սրբացած բոլոր հոգիներուն մէջ
որ զինքը սիրեցին իր բարութեան համար. այդ վերածին ու անմահական
կեանքի փայլուն ապացոյցն էր անշուշտ արտայայտութիւնը համազգային մեծ
սուգին որ տեսնուեցաւ հայ ամբօրիններուն մէջ անխտիր, և որուն այնքան
սրտառուչ արձագանգն եղաւ հայ մամուլը անկեղծ ու անվերապահ տողերով,
որոնք հնչուն և տեւական պիտի մնան աւելի քան ո՞ր և է յուշարձան:

*
* *

Գերերջանիկ ողբացեալը ծնած էր Ակն, 1856ի Ապրիլ 13ին: Գաւառի
հարազատ շունչով ապրած մանուկ և պատանի, 17ամեայ հասակին ինքզինքը
նուիրեց եկեղեցականի կոչման, անշուշտ իր հոգւոյն խորէն հնչող երկնային
ձայնի մը ունկնդիր, որուն մնաց միշտ հաւատարիմ և իր տեսականն ըրաւ
ծառայել իր ժողովրդեան մինչեւ իր յետին շունչը՝ ծառայած ըլլալու համար
կրօնքի և Ազգութեան մեծ դատին, որոնց յաղթանակին մէջ կը հաւատանք
մարդոց երջանկութիւնը:

1873-1876 կ. Պոլսի և ապա 1876-1883ին Ռւբրանեան և հուսկ 1883-
1884 Լեւոնեան նորաբաց կղերանոցին աշակերտելով՝ աւարտեց իր ընթացքը
և 1884ին քահանայ ձեռնադրուած՝ տարի մը մնաց վարժարանին մէջ իբր
փոխ-տեսուչ, և 1885ին ցուպ ի ձեռին դարձաւ հայրենիք Առաքեալի մը
հոգւով և պատրաստութեամբ:


Ժողովրդապետական հնգամեայ եռանդուն գործունէութեան մը կը յա-
ջորդէր իր եպիսկոպոս ընտրութիւնը խարբերդի թեմին 1890 Նոյ. 16ին, և
1898ին կ. Պոլիս կը փոխադրուէր իբրեւ Պատրիարքական փոխանորդ մին-
չեւ 1905, երբ կ'աքսորուէր Լիբանան՝ կարմիր Սուլթանի կողմէն:

1909ին Առաքելական Տեղապահ, ապա 1911ին թեմական կ'ընտրուէր
Մարաշի՝ վարելով զայն մինչեւ վերջին աղետի օրերը 1922, երբ իր ժողո-
վրդեան հետ աքսորի ճամբան կը բռնէր դէպ ի հալէպ՝ սուրի և հուրի մէջ
թողած իր այգին՝ զոր այնքան քրտինքով և վաստակներով մշակած էր:

1923ին ան Պէյրութ կը կանչուէր իբրեւ Պատրիարքական փոխանորդ,
և հինգ տարի վերջ, 1928ին նաեւ թեմական փոխանորդ:

Իր փորձառութիւնն և խաղաղասէր գործունէութիւնը իր վրայ հրա-
ւիրեցին ուշադրութիւնը հայ կաթողիկէ Եպիսկոպոսներու ժողովին՝ որ
1931ին հոկտ. 17ին գումարման մէջ զինքն ընտրեց կաթողիկոս - Պատրիարք:

Երկու տարի վերջ, 1933ին, ողբ. հայրապետը հռոմի մէջ Պալիումը
կ'ընդունէր Ս. Քահանայապետին ձեռքէն և կը կատարէր հանգիստաւոր տօ-



ԱՍԵՆԱՊԱՏԻԻ ԳԵՐԵՐԶ. ԱԻԵՏԻՍ ՊԵՏՐՈՍ ԺԴ. ԱՐՓԻԱՐԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐԿ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ

1605-71



